ս. Սահակի մատրան ստորագրութեան միջոցին սոյն գրքի մէջ, որոյ նահատակութեան տեղումը հայերը շինել են եկեղեցի, որ է հին եկեղեցին Զամախուոյ. իսկ մարմնոյ այրուած տեղը՝ ուխտատեղի է Պարսից՝ այն գետակի եզերին, որ Զամախու հանդէպն է ընդ արևելս 5 վերստ հեռաւորութեամբ Բաղուի ճանապարհին և անուանվում է հայերից «Փիր Սահակ», իսկ պարսիկներից «Փիր Սահակ»։

Զամախեցի էր Յակոբ Ե. Կաթուղիկոսը 1759-1863 թուերին, որոյ համար մի ձեռագիր Աւետարանի յիշատակարան ասում է. «ունէր բաղում աշակերտս ուսման», որոյ դպրոցն երևի լինել ի Մէյսարու վանս և շատ յարմար է[1])։

Յակոբ Կաթուղիկոսի համար պատմութիւնն ասէ. «Զայս կաթուղիկոսարան Երևանայ շքեղազոյն շինութեամբ նորոգեաց Ե. Յակոբ կաթուղիկոսն Զամախեցի», որ է Երևանայ Զորագի Անապատն, «Զոր շինեցին կաթուղիկոսարան Մովսէս, Փիլիպոս և Յակոբ կաթուղիկոսունքն». Ինճիճեան «Նոր. Հայաստան» 1806 ամի. յերես 253։

Ընբահամ Կաթուղիկոս Կրետացի Նաղիր-Շահի պատմութեան մէջ (Գլ. ԻԸ. յերես 40. տիպ 1870) հրաւիրեալ իշխանաց կարգումն գնէ «Զամախու Բէկլար- Բէկի Ղրալն»։

«Ջամբռ» Սիմէոն կաթուղիկոսի 1873 ամի, երես32՝ «*Վասն Յակովբայ կաթուղիկոսին Շամախեցւոյ*»։

«Ապա նստի ի Ս. Էջմիածին կաթուղիկոս տէր Յակովբ Շամախեցին ի ՌՄՀ թուականն (1759) ի թագաւորութեան Օսմանցւոց Սուլթան Մուստաֆային։ Սա էր այր պիտանի և խորհրդական, խելօք և հանճարեղ յամենայն գործս, և գիտուն և շնորհաշատ։ Ի մանկութենէ ի ս. Աթոռս գոլով՝ ոչ է կեցեալ անգործ. զի ասէր դաս միաբանից զինչ և խնդրէին։ Շարադրէր զմուսավատայս[2]) և տայր

---

[1])Յակոբ կաթուղիկոսը Էջմիածնայ ժառանգաւորաց դպրոցումն ևս ուսուցչութիւն արեց, և թողեց ուսեալ աշակերտներ, որոց մին է և Սիմէոն կաթուղիկոսն Երևանցի, որոյ չարունակութիւնը պահեց մինչև Էջմիածնայ Ճեմարանի բացումն 1874։

[2])Միւսէվէտէ, Սեւագիր, Օրինակագիր։